

**ՀԱՍՏԱՈՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԲԵՐՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Հիմնական վիճակագրական ցուցանիշների սահմանումները, հաշվարկման մեթոդաբանությունը, չափորոշիչները և այլ համապատասխան տեղեկատվությունը զետեղվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցների թողարկումների «Հավելված» հատվածում: Հատվածը մշտապես նորացվում է՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ավելացվում են նոր ցուցանիշներ և տրվում դրանց նկարագրությունները և սահմանումները:

2. Ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումներն՝ առանձին հատվածների տեսքով զետեղվում են նաև վիճակագրական ժողովածուներում, տեղեկագրերում և այլ վիճակագրական հրատարակումներում:

3. Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ:

Թվարկվածներից՝ Տվյալների տարածման ընդհանուր համակարգին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2001 թվականի մարտի 29-ին, Տվյալների տարածման հատուկ ստանդարտին՝ 2003 թվականի նոյեմբերի 7-ին:

Չգտելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական դաշտերի ներդաշնակեցմանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը վիճակագրական հրատարակումների կառուցվածքը, ցուցանիշների ցանկը և դրանց հաշվարկման մեթոդիկան առավելագույնս համապատասխանեցնում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական հրատարակումների կառուցվածքին, ցուցանիշների ցանկին և դրանց հաշվարկման մեթոդիկային:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայքում մշտապես զետեղվում են վիճակագրական հրատարակումները (հայերեն, նախատեսված դեպքերում ռուսերեն, անգլերեն լեզուներով), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումները և մեթոդաբանական պարզաբանումները:

5. Միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրագեղ լինելու նպատակով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունից ստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում պահպանում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրատարակումները: